50. ԻՆՈՅԻ ՀԵՔԻԱԹ

Կէղի, չէղի մեկ թագավոր մի կէղի։ Ըդ թագավորին քառասուն խատ տղա կէղի։ Ըդ քառասունի պղտկի անուն Ինո կէղի։

Ըդ թագավորն ա կեսա.— Տղա՛, լաո՛, իմ մեռնելու օրն էկեր ա,— կեսա,— ընձի պտի խորիք թաց տեխ, նստիք չոր տեխ, թը չէ, չոր տեխ խորիք նստի(ն)ք թաց տեխ։

Թագավորի օրն խասավ ու մեռավ։ Պղտիկ ախպերն էր կեսա.

— Խորինք չոր տեխ, նստինք թաց տեխ։

Ճոչ ախպրտիք լէ կեսին.— Խորինք թաց տեխ, նստինք չոր տեխ։

Էրեցին, չէրեցին Ինոյին ինքր չէղավ։ Բերին խորեցին չոր տեխ, նստան թաց տեխ։

Իղոնց իդարեն խլսավ։ Պղտիկ ախպեր ըսեց.

— Ախպրտիք, էլեք հ'ոցքի էրթանք մրզի իդարեն չէղի։

Գացին ուրիշ քաղաք թագավորի մոտ, էլան դուրս։ Գացին թագավորի մոտ, էղան մշակ։ Թագավոր իգոնց հախ բարըշավ։

Գելին կէրթան թագավորի արտի մեջ քաղ կէնին։

Թագավորն ա, ժուք ու ժամանակ մը գընցնի, կինի մարաջա խետ Ինոյին։ Կբերա գինի տա օր խմա, օր սպանա։ Ինոն ա խստոբ խիվանդ կէղի, կեսա. «Ես չկրնամ խմիմ»։

Թագավորն ա գելի կեսա.— Ինո՛, պըտի էրթաս Մարդ մարդագելու բաղեն անմաութենի խնձոր բերիս։

Ըդ Ինոն ա, գելի կարթալ մի ու կթոի կէրթա, շատ ու քիչ ճանապարհ կէրթա, կէրթա ըդ Մարդագելի բաղի մէջ։ Քենի մի խընձոր կքաղա, գըլնա ուր դաստմալ ու գիգա Մարդ-մարդագել քնուկ ա։

Մարդ-մարդագելն էր, հ'իմցավ, մեկեն տեսավ որ խնձորներն տարած ան։ Գելի կլարա Ինո ետև, մռութ կերկնցու որթը զԻնոն բռնա, Ինոն ա կփախի։ Էդիկ լարա ետև, կփնչա որ թը բռնա, ամա Ինոն ա կփանցրնա ու կփախի կպրծի, էլ չկերնա զԻնոն բռնե։

Ըդ Ինոն ա գիգա կառի զխնձոր, գիգա կը դրա վըր թագավորի շոքին։ Թագավորն ա որթը անմահութենի խնձոր կուտա, կէղի տասնուխինգ տարեկան ջհել։

Գելի կեսա.— Ինո, պտի էրթաս ընձի Մարդ-մարդագելու դլխու տակի համայիլ բերիս։

Ըդ Ինոն ա, գելի կէրթա որ համայիլ բերա։ Կէրթա որթը հանդե Մարդ-մարդագել պառկեր ա ուր տուն, քնուկ ա, համայիլ լէ դրուկ ա դլխու տակ, ու քնուկ ա։

Կիչի Ինոն, կէղի մժիկ մի, կքաշվի հ'առիք, Ինոն ա որթը Մարդ-մարգագել կփնչա, Ինոն կկպի հ'առիք, որթը բեն կխանա դիդա կկպի քիթ մռութ։ Ինոն ա ուշիկ Մարդ-մարդագելու գլոխ կվերցու, դողտու համայիլ կառի ու կփախի, կէղի ցուրուր մի ու կթոի։

Ըդ Մարդ-մարդագելն ա դիմնա, գելի ու գընգնի ետև, կէնա որ թը խասի Ինոն, Ինոն ա ցուրուր ա կփանցրնա։ Ինոն ա կպրծու կփախի էլ չկերնա խասի։

Փախի, կառի գիգա, կգրի թագավորի հ'առեճ։ Կդրա թագավորի շոքին։

Թագավոր կեսա.— Բերեցի՞ր։

Կեսա.— Բերի՛։

Կեսա.— Ինո, մե շարթ մնաց, էն մե շարթ լէ պըտի էրթաս բերիս։

Կեսա.— Ի՞նչ ա։

Կեսա.— Պըտի էրթաս Մարդ-մարգագելու որորոց բերիս։

Ինոն չարեն կկտրի, գելի կէրթա. չարեն ի՞նչ։

Ինոն էր հ'ելավ ու գնաց։ Հ'ելավ գնաց որ թը որորոց առնի հ'իգա։ Գնաց Մարդ-մարդագելու տուն, տեսավ որ թը Մարդ-մարդագել քնուկ ա մըշ ուր որորոցին։ Ինոն ա կէղի ճանճ մի, կքաշվի

ըդրա պատ։ Մարդ-մարդագելն ա պտի յոթն օր քնի, օրթը քնուկ տեղ առի հ՝իգա։

Ինոն ա կիչի, Մարդ-մարդագել չվանով կկապա օրորոցին։ Կկապա իրար ու կշալկա, կառի դիդա, կդնի թագավորի հ՝առեճ։

Թագավորին ըսեց.— Ըհա, քըզի Մարդ-մարդագել էլ, Մարդ-մարդագելի օրորոցն էլ։

Թագավոր օր տեսավ Մարդ-մարդագել, փախավ։

Մարդ մարդագելն էր հ՝ելավ զթագավորն բռնեց. էն քաղաք էնպես էրեց օր տակն ու վրա, ըդ քառասուն ախպրտոց լէ կերավ, մինակ Ինոն փախավ։ Թագավորին լէ կերավ ու գնաց, օլորտեց, օլորտեց, գնաց Ինոն գտավ։ Գնաց տեսավ օրթը հանդե Ինոն մտուկ ա ճաղցի շոզտուն, ըսեց.

— Ինո՛, իդհախսի քու հոգին դոր պըտի դնիս։

Ինոն ըսեց.— Աստված օղորմած ա։ Ինոն էր, բռներ ա ճաղցի թուփ ու կաներ ա։

Ըսեց.— Ինո, դոր վի էկեր ես օդի։

Ըսեց.— Դեմ էկեր եմ օդա համա, արի էստեխ ս՝անք ի՞նչ պըտի էնիս ընձի։

Էդի էր օրթը գնաց, ճաղցի թուփ թորկեց, օր թորկեց, Մարդ-մարդագել էնեց խաղար-խաղար կտոր։

Ինոն էր, օր Մարդ-մարդագելուն էնեց խաղար-խաղար կտոր, գնաց նստավ թագավոր։

Ինոնք խասան ուրանց մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ ջամաթին։